ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ «ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԱՀԱՆ» ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՊԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

12.01.2021 17:10

2021 թվականի հունվարի 12-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և «Հայրենիքի Վահան» պահեստազորի սպանների միության տնօրեն Կարեն Հակոբյանը ստորագրել են համագործակցության հուշագիր:

Հուշագրի կողմերը պատրաստակամություն են հայտնել՝

1. Համատեղ մշակել և իրականացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող իրավական կամ այլ թեմաների վերաբերյալ ծրագրեր և դասընթացներ (սեմինարներ).

2. Պալատի և Միության անդամների համար կազմակերպել համատեղ մարզական, մշակութային միջոցառումներ, մրցախաղեր և նպաստել Պալատի և Միության անդամների փոխադարձ շփման, կապերի հաստատման և համագործակցության ապահովումը.

Յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ Փաստաբանների պալատի աշխատակազմի և կամավոր փաստաբանների միջոցով պահեստազորի սպաներին և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվելու է անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Միությունը փաստաբանների համար կազմակերպելու է մարտական պատրաստության (այդ թվում՝ կրակային, մարտավարական) տեսական և գործնական պարապունքներ:

Բեռնել հուշագիրը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })